

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2006թ. փետրվարի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու.Պողոսյանը մասնակցել է ք.Երևանում կայացած սեմինար-խորհրդակցությանը նվիրված Համաշխարհային Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում հիդրոօդերևութաբանական ապահովման տնտեսական արդյունավետության գնահատման ուսումնասիրությունների պիլոտային փուլի արդյունքների քննարկմանը,
- ✓ 2006թ. փետրվարի 9-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ.Գևորգյանը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը մասնակցել են ք.Երևանում կայացած «Աշխատանքի էմիգրացիան Հայաստանից 2002-2005թթ.» թեմայով հետազոտության շնորհանդեսին,
- ✓ 2006թ. փետրվարի 16-ին ՀՀ նախագահի օգնական և մամլո-քարտուղար Ա.Աղազարյանը մասնակցել է ք.Երևանում կայացած «Ինչպես կիրառել “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքը» թեմայով աշխատանքային քննարկմանը,
- ✓ 2006թ. փետրվարի 17-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս.Մնացականյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը մասնակցել են ք.Երևանում կայացած Կոռուպցիայի դեմ պայքարի համագործակցող խորհրդի առաջին նիստի գումարմանը,
- ✓ 2006թ. փետրվարի 28-ին թվով 40 հոգի ՀՀ ԱՎԾ աշխատակիցներ մասնակցել են ք.Երևանում կայացած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցին նվիրված մամուլի հաղորդագրությանը: